ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի տասներորդ նստաշրջանն իր աշխատանքը շարունակեց հոկտեմբերի 15-ին: Նիստը տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ **Ս. Խ. Տոնոյանի** նախագահությամբ:

Դեպուտատները հաստատեցին նիստի հետևյալ օրակարգը, որն առաջարկվել էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հոկտեմբերի 14-ի ընդլայնված նիստում, այն է.

1. 1989 թ. հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտ քաղաքում տեղի ունեցած ողբերգական միջադեպի մասին:

2. Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների հաղորդումները՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում իրենց կատարած աշխատանքի մասին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեից ստացված ինֆորմացիայով հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Օ. Ի. Լոբովը:**

Ծավալվեց մտքերի լայն փոխանակություն: Եղույթ ունեցան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ **Ռ. Ս. Քոչարյանը** (Կիրովական քաղաքի Իսահակյանի ընտրական օկրուգ), **Ռ. Ա. Ղազարյանը** (Աշտարակ քաղաքի Աշտարակի ընտրական օկրուգ), **Պ. Լ. Հակոբյանը** (Երևան քաղաքի Քանաքեռի ընտրական օկրուգ), ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Ն. Խանզադյանը,** Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ **Խ. Վ. Ստամբոլցյանը** (Երևան քաղաքի Նարեկացու ընտրական օկրուգ), **Ռ. Խ. Թամիրյանը** (Լենինական քաղաքի Երկաթուղայինների ընտրական օկրուգ), **Ս. Մ. Մուրադյանը** (Կիրովական քաղաքի Մաշտոցի ընտրական օկրուգ), ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Կ. Ա. Սիմոնյանը,** Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ **Կ. Լ. Դալլաքյանը** (Լենինական քաղաքի Անտառավանի ընտրական օկրուգ), **Ա. Մ. Կիրակոսյանը** (Սևան քաղաքի Քաղաքային ընտրական օկրուգ), **Ռ. Ա. Ալեքսանյանը** (Գորիս քաղաքի Կենտրոնական ընտրական օկրուգ), ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Բ. Վ. Դադամյանը, Ս. Առաքելյանը** (Հայոց համազգային շարժում):

ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Օ. Ի. Լոբովը** պատասխանեց դեպուտատների հարցերին:

Քննարկված հարցի առթիվ Գերագույն խորհուրդը ընդունեց համապատասխան որոշում:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ հաղորդումով հանդես եկավ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Ա. Համբարձումյանը:** Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ **Ռ. Ս. Քոչարյանը** (Կիրովական քաղաքի Իսահակյանի ընտրական օկրուգ), ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ **Ս. Ե. Նազարյանը, Է. Թ. Հարությունյանը,** Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ **Է. Բ. Աղայանը** (Երևան քաղաքի Դ. Դեմիրճյանի ընտրական օկրուգ), **Ռ. Ա. Ղազարյանը** (Աշտարակ քաղաքի Աշտարակի ընտրական օկրուգ), պատմաբան **Լ. Ա. Խուրշուդյանը,** ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ **Լ. Հ. Հարությունյանը, Կ. Ա. Սիմոնյանը,** բանաստեղծ **Գևորգ Էմինը,** Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ **Խ. Վ. Ստամբոլցյանը** (Երևան քաղաքի Նարեկացու ընտրական օկրուգ), **Լ. Վ. Խաչատրյանը** (Սիսիանի շրջանի Անգեղակոթի ընտրական օկրուգ):

Նիստում հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Գ. Հարությունյանը:**

Գերագույն խորհուրդը ի գիտություն ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Հայկական ԽՍՀ ժողովրդական դեպուտատների գործունեության վերաբերյալ հաղորդումը:

Հարցապնդումներ արեցին դեպուտատներ **Ա. Գ. Մանուչարյանը, Հ. Ս. Քոթանջյանը, Ս. Հ. Վարդանյանը, Ա. Մ. Կիրակոսյանը,** Երևանի պետհամալսարանի գիտաշխատող **Ա. Ա. Սադոյանը** և ուրիշներ:

Հարցերի պարզաբանումներով հանդես եկան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ **Հ. Մ. Ոսկանյանը,** Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ **Ս. Ս. Ավետիսյանը:**

(Արմենպրես)